

ՓԵՏՐՎԱՐ 2024

**ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
2. Առևտրային տնօրինություն	9
2.1. Բաժանորդների տվյալներ	9
2.2. Հասույթ	10
2.3. Գանձում	11
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	11
2.5. Ջրաչափեր	12
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	13
3. Տեխնիկական տնօրինություն	14
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	14
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	15
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	17
3.4. Ջրատար համակարգի բարելավում	18
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	18
3.6. 1-85 թեժ գիծ	19
4. Լրատվական ծառայություն	20
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	22
5.1. Դասընթացներ/սեմինարներ	22
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	23
5.3 Արտադրական վտանգավոր օբյեկտների կոնսերվացման վկայագրերի մշակման և տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ	24
5.4. Վեոլիա Գրուպի ԲՈՎ ստանդարտների ինքնագնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՈՎ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ	24
5.5. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ	25
5.6. Համագործակցություն ՀՀ նգ նախարարության և հիմնարկատարանների հետ	25

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Երևան» ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Գյումրի

■ Գյումրի քաղաքի Անի թաղամասում նոր անցկացված ջրագծերի միացման, փոխկապակցման հետ զուգահեռ Շիրակ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ ուսումնասիրվեց, հայտնաբերվեց մի քանի կորած դիտահորեր փականային հանգույցներով և խցափական արդյունքում շահագործումից հանվեցին Մովսես Խորենացի, Ե. Չարենց, Տ. Ճարտարապետ և 5-րդ փողոցներով պարփակված հատվածի հին ջրամատակարարման ցանցի ջրագծերը: Արդյունքում, քայքայված D-150-300մմ ջրագծերի վրա ընդհանուր չափված ջրաքանակներով, խցափակումից հետո խնայվեց մոտ 5 լ/վ ջրաքանակ:



Գյուղ Վարդաղբյուր



■ Աշոցք տեղամասի Թորոս բնակավայրում առաջացած ջրամատակարարման խնդրի հետ կապված, շահագործման տեղամասի աշխատակիցների հետ համատեղ, Վարդաղբյուր համայնքի դաշտերում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Դարախաչ-Թորոս D=150-160մմ ՊԷ-մետաղական ջրագծի վրա: Արդյունքում, տվյալ հատվածի քայքայված D=150մմ ջրագծի վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=3լ/վ ջրաքանակ և վերականգնվեց Թորոս բնակավայրի ջրամատակարարումը:



Գյուղ Հայկավան

■ Շիրակ տեղամասի Հայկավան բնակավայրում առաջացած ջրամատակարարման խնդրի հետ կապված շահագործման տեղամասի աշխատակիցների հետ համատեղ գյուղի դպրոցը և փախի տներ սնուցող ջրագծի վրա կատարվեցին վթարաորոնողական աշխատանքներ: Արդյունքում հայտնաբերվեց $D=50$ մմ անհայտ ջրագիծ $Q=0.5$ լ/վ արտահոսքով: Ջրագիծը խցափակվեց Շիրակ ՇՏ-ի կողմից, շահագործումից հանվեց $D=50$ մմ $L=100$ մ պողպատե ջրագիծ:



Քաղաք Ծաղկաձոր



■ Ծաղկաձոր քաղաքում իրականացված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում Պահլավունյաց փողոցում հայտնաբերվեց թվով 2 վթար $D=150$ մմ պողպատի ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց ընդհանուր $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

■ Ծաղկաձոր քաղաքի Կեչառեցի փողոցի վրա իրականացված աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 3 վթար $D=150$ մմ պողպատի ջրագծի վրա: Վերացնելուց հետո տնտեսվեց ընդհանուր $1,3$ լ/վ քանակությամբ:




Քաղաք Երևան




■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Մամիկոնյանց 50 հասցեում, $D = 300$ մմ պողպատե ջրագծի վրա, դիտահորի մեջ: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվեց $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Սարմենի 60 հասցեում $D = 150$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվեց $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



■ Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Մոսկի 38 տան մոտ, $D=80$ մմ թուջե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



■ Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Նար-Դու-Խորենացի գոտում, մասնավորապես Տիգրան Մեծի 74 հասցեի մոտով անցնող $D = 300$ մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 6$ լ/վ ջրաքանակ:

■ Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Դավթաշեն 3-րդ թաղամաս 13-րդ շենքի մոտով անցնող $D = 200$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 16$ լ/վ ջրաքանակ:



■ Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Պոռչյան գյուղի Մայիսյան 8 հասցեի մոտով անցնող $D = 100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

■ Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 2 գաղտնի վթար Բաշինջաղյան 187 շենքի մոտով անցնող $D=80$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



Ջրահեռացման համակարգ

■ «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Պուշկինի փողոց 54 հասցեի $d=150$ մմ քայքայված կոյուղագծի $L=12$ զմ հատվածը փոխարինվել է նոր երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերացել են հաճախակի կրկնվող խցանումները, նվազել են շահագործման ծախսերը:



Փետրվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	865
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	32461
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	29694
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	614
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	2424.5
Կառուցված ջրագիծ	մ	5786.5
Կառուցված կոյուղագիծ	մ	881.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	9
Փոխարինված փական	հատ	123
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	320
Մաքրված դիտահոր	հատ	1788
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	9.5
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	928
Ջրահեռացման ցանցում	հատ	1318
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Փետրվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	757	781	870

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է փետրվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	131	0	1	0	1	0	10	0	1	0	144
Փոխարինված	376	11	4	0	10	14	13	1	0	2	431
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	124	5	2	0	4	5	4		2	0	146
Ընդամենը	631	16	7	0	15	19	27	1	3	2	721

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 721 ջրաչափ: Կատարված աշխատանքների 88%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փետրվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արարկիր	790	301	0
2	Քանաքեռ-Զեյթուն	0	276	0
3	Մաշտոց	80	263	0
4	Շահումյան	0	268	144
5	Շիրակ	1675	398	28
6	Արթիկ	280	85	0
7	Ապարան	0	80	0
8	Ալավերդի	710	35	0
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	615	6	6
11	Իջևան	0	52	176
12	Լոռի	0	191	0
13	Նոյեմբերյան	140	16	0
14	Սպիտակ	0	17	0
15	Ստեփանավան	1380	24	0
16	Թալին	0	15	0
17	Տաշիր	0	11	0
18	Չարենցավան	0	94	19.5
19	Արմվյան	0	101	27
20	Հրազդան	0	109	126
21	Կենտրոն	200	228	12
22	Հյուսիս	0	219	80
23	Հարավ	0	370	12.5
24	Էրեբունի	210	177	6
25	Արմավիր	0	145	0
26	Արտաշատ	0	151	12
27	Էջմիածին	0	225	72
28	Աշտարակ	2100	40	0
29	Արարատ	0	70	0
30	Մասիս	0	79	0
31	Գավառ	90	32	0
32	Սևան	1050	110	0
33	Մարտունի	0	33	0
34	Վարդենիս	2230	17	4
35	Ճամբարակ	50	22	0
36	Դիլիջան	270	58	6
37	Վայք	435	18	0
38	Եղեգնաձոր	1415	12	0
39	Ջերմուկ	0	53	0
40	Սիսիան	0	34	0
41	Գորիս	0	34	0
42	Կապան	0	96	44
43	Մեղրի	0	66	0
	Ընդամենը	13720	4636	775

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

■ Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի էլեկտրական վահանակում հրդեհ էր բռնկվել, որի հետևանքով այրվել էին վահանակում գտնվող բոլոր սարքավորումները: Արդյունքում տեղադրվեց լրիվ նոր սարքավորումներով համալրված էլեկտրական վահանակ: Այժմ պոմպակայանը գործում է անխափան: Մաքրվեցին նաև հակադարձ փականները, որոնք ամբողջությամբ խցանվել էին:

■ Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էին պոմպերի բանվորական անիճները, որի արդյունքում պոմպերի արտադրողականությունն ընկել էր գրեթե 90 տոկոսով: Արդյունքում պոմպերը դուրս բերվեցին հորից, մաքրվեցին և ետ տեղադրվեցին: Մաքրվեցին նաև հակադարձ փականները: Այժմ պոմպակայանը աշխատում է անխափան:

■ Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում այրվել էր մաքուր ջրի պոմպը, որը փոխարինվեց նորով: Կատարվեց նաև մանր ճաղավանդակի քերիչ սանրի կարգաբերում, որը աշխատանքի ընթացքում խախտվել էր:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտոտ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	56,933	21,6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	57,552	28,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	159,260	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	68,970	5,4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	114,686	18
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,355	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,278	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	18600	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	7,200	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 235 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 190 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.03.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 616,734 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. փետրվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	677,449	587,407	86,7
	Իրավաբանական անձ	32,651	29,327	89,8

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	748,459	597,924	79,9
	Իրավաբանական անձ	38,165	27,620	72,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 1052 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Մեան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Փետրվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5356 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2861	1395	408	4664
	Իրավաբանական անձ	487	134	71	692
	Ընդամենը	3348	1529	479	5356


Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ փետրվար ամսին փոխարինված 5356 ջրաչափերի մոտ 38 %-ը (կամ 2008 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 316,388 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Ստուգաչափված ջրաչափ



Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Փետրվար ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,423 մլն. դրամ (98 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Փետրվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 138 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 15.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2024թթ. ընթացիկ դրժեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
30,864	4,209,805,755	18,758	2,144,970,374	959	218,837,133	12,115	1,841,328,201	11,925	1,415,301,929

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 61 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.03.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,189	2,375
Բնակիչ-բաժանորդներ	7,870	1,605
Իրավաբանական անձեր	3,319	770

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 397.1 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2024 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.03.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	719,374	596,897	82.97	37,113	27,612	74.40
	Առանց ջրաչափի	29,085	1,027	3.53	1,052	8	0.76

Տվյալների բազայում 01.03.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	890,511	376,316	42.26	40,642	6,679	16.43

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6983 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 844 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱՄ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2478	2038	81.9
գ.Պոռշյան	1712	1121	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6022	1965	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը:
 Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 18504, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 17105, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4775, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5605, Մխիթան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2786, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4693 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8008 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:
 Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	362	179,719	32,345,120


Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի փետրվար ամսվա շարունակականության տվյալը կազմում է 96.3%, ինչը 0.2%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Զրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 76 ճԿՓ:

Ստորև ներկայացված են կարգաբերված ճԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.






Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի փետրվար ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 148 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 14 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 5765 կՎտ.ժ (1.22%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 7 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 7 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 2909 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կավելանար 2856 կՎտ/ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել է 67 էլ. հաշվիչ: 3 հասցեում փոխարինվել են էլ. հաշվիչները: 6 հասցեում մոնտաժվել է ստուգիչ էլ. հաշվառման համակարգ: Չնայել է 6 նոր ընդունվող պոմպակայան: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱՇ (օր առաջ շուկա) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 9,312,857 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) և 1,197,592 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պումպակայանների ուսումնասիրություն

Թվով 24 խոշոր պումպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 19 պումպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 235 բակային պումպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 190 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում երկու հասցեում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Ազատության 12/1 (QZ-12)
- Ա. Խաչատրյան 6 (Ar-81)

Տեղադրված ընդհանուր 115 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 17764կՎտ/ժ-ով 8%-ով:


Խոշոր պումպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 31 խոշոր պումպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան


■ 2024 թվականի փետրվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 27929 կՎտ/ժամ (2,52%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայանների սպառած էլեկտրաէներգիա



■ Ջրարտադրության պումպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսը նվազել է 10 047 ԿՎտ/ժ/ամիս կամ 0.59 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պումպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

■ Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է 102482 ԿՎտ/ժամ 2.54%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են փետրվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«ՋԻՆՋ» ընկերության կողմից տրամադրված Նոր Խարբերոյ գյուղի կատարողական գծագրի թվայնացում	թարմացում	1
ՃԿՓ-ների, հոսքաչափերի տվյալների բազայի թարմացում	թարմացում	1
SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում ԱՏՀ բազային	գործողություն	1
139 տեխնիկական պայմանների թվայնացում (255 բաժանորդ)	տեխպայման ոլորտներ	139
Էլեկտրամատակարարման (101), գազամատակարարման (12), լուսացույցների (47), լուսանկարահանող սարքերի (20) և կապի միջոցների (58) նախագծերի թվայնացում, համաձայնեցում տեղամասերի հետ		5
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2753
«ԱՏՀ»-ում առկա մարզերի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9541
«Ինտերակտիվ» համակարգում նոր կետերի ավելացում /ֆիզիկական/	կետ	759
«Ինտերակտիվ» համակարգում նոր կետերի ավելացում /իրավաբանական/	կետ	47
Տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Հաշվետու ժամանակահատվածում ամսին կատարվել է 179 գործի թվայնացում 343 բաժանորդ	թվայնացում	179
Երևան ՇՏ-ի կողմից 2024թ-ի հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և կոյուղատար ցանցում կատարած վթարավերականգնողական աշխատանքների համակարգում, համապատասխան ծրագրերի կազմում և մուտքագրում ԱՏՀ	մուտքագրում ԱՏՀ	1
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1849
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1855
Կազմվել են ՀՀ մարզային (585) և Երևանի (30) վերաբերյալ քարտեզներ, որոնք ներառում են տեղեկատվություն ջրագծերի, նմուշառման կետերի, ՕԿՁ-ների, ՃԿՓ-ների, լոգերների, լոգեր գոտիների, պոմպակայանների վերաբերյալ	քարտեզներ	615

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

■ Օտարվ Աղբյուր - Ձորաղբյուր ջրատարների շրջայցի ընթացքում հայտնաբերվեց վթար՝ Ծիծեռնակաբերդ ՕԿՁ բարձրացող d=400մմ ջրատարի վրա: Վթարի մեծությունը մոտ 4/վ էր: Վթարը վերացվեց «Կենտրոն» ՇՏ-ի կողմից: Շրջայցի ընթացքում առաջացավ վթար Ձորաղբյուրի ջրատարի ԱՄՆ դեսպանատնից հետո Իսակովի պողոտայի վրա, մոտ 30լ/վ մեծությամբ: Կազմապերպվեց ջրատարի մասնակի կանգառ՝ ջրատարում ճնշումը նվազեցնելու նպատակով: Վթարը վերացվեց «Շենգավիթ» ՇՏ-ի կողմից: Վթարավերականգնողական աշխատանքներից հետո վերականգնվեց ջրատարի բնականոն աշխատանքը:



■ Արին-Բերդ Խարբերդ ջրատարի շրջայցի ընթացքում հայտնաբերվեց վթար մոտ 5լ/վ մեծությամբ, որի մասին տեղեկացվեց Շահագործման տնօրինությանը:

■ Կատարվել են նաև չափումներ և կարգավորումներ Թալին տեղամասի Կենտաղբյուր և 809 ջրատարների վրա:

■ Հաշվետու ամսում կատարվել են նաև ջրաչափումներ և ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

3.5. ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության» կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

■ Քաղաք Մասիսի «Արարատյան 1/2» քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի վակուում գասաված քլորագիծը:



■ Գյուղ «Բուժականի» քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հիպոքլորիդի հաբի համակարգի դոզավորման պոմպի շարքից դուրս եկած մեմբրանը փոխարինվել է նորով:

■ «Գառնի» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հեղուկ քլորի համակարգի հնամաշ քլորի բաժանարար հանգույցը փոխարինվել է նորով:



■ Քաղաք Գյումրի, «Կապս» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչը փոխարինվել է նոր վակուում կարգավորիչով, 4կգ/ժ դոզատորները փոխարինվել են 1կգ/ժ նոր դոզատորներով չափաբաժինը ճիշտ կարգավորելու համար:

■ Քաղաք Վայք, «Մալիշկա» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել են հեղուկ քլորի համակարգի խափանված ինժեկտորը և դոզատորը:



■ Քաղաք Արթիկ, «Մանթաշ» քլորակայանում հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի շարքից դուրս եկած քլորագիծը:



■ Քաղաք Մեղրի, «Մեթենց» քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խցանված վակուում կարգավորիչը, ցուցիչը փոխարինվել է նորով՝ հեղուկ քլոր համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

■ Քաղաք Գառնի, «Օգոնակայան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի հնամաշ բաժանարար հանգույցը փոխարինվել է նորով և ամրացվել է բաշտնի հենակը:



3.6 1-85 ԹԵՏ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 43641 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12935 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 10433 զանգ (80.7%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2502 զանգ (19.3%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 30706 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 21776 զանգ (70.9%), իսկ մարզերինը՝ զանգ 8930 (29.1%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիթ

	Ստորաբաժանում	2023 Փետրվար	2024 Փետրվար	
Ատևորային	Ընդամենը	9523	12935	35.83%
	Երևան	7391	10433	41.16%
	Մարզեր	2132	2502	17.35%
Շահագործում	Շահագործում	22237	30706	38.09%
	Երևան	16859	21776	29.17%
	Արարիկի	2615	4283	63.79%
	Քանաքեռ-Զեյթուն	1205	1995	65.56%
	Մաշտոց	3446	3717	7.86%
	Շահումյան	1727	3253	88.36%
	Շենգավիթ	2433	3222	32.43%
	Կենտրոն	2408	2663	10.59%
	Հրուսիա/Ավան Նոր Նորք/	1261	1383	9.67%
	Էրեբունի	1764	1260	-28.57%
	այդ թվում կոյուղու վթար	161	158	-1.86%
	այդ թվում դիտահորի խցանում	5121	6602	28.92%
	ՄԱԸԶԵՐ	5378	8930	66.05%
	Հարավ	2830	5160	82.33%
	Հյուսիս	2548	3770	47.96%
այդ թվում կոյուղու վթար	36	881	2347.22%	
այդ թվում դիտահորի խցանում	2275	3376	48.40%	
Ընդամենը	31760	43641	37.41%	

■ 2023թ. փետրվար ամսվա համեմատ՝ 2024թ. փետրվար ամսին 35.83%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը ավելացել է 38,09 %-ով:

■ 2023թ. փետրվարի համեմատ՝ 2024թ. փետրվար ամսին 26%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 14%-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակը և 37%-ով ավելացել է հայտարարությունների լուսնու ավտոմատ ծառայության միջոցով:

Ջրամատակարարման գրաֆիկի բողոքներ

■ 2023թ. փետրվարի համեմատ՝ 2024թ. փետրվար ամսին 32.98%-ով ավելացել է ջրամատակարարման զանգերի քանակը:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու՝ փետրվար ամիսը ընդհանուր առմամբ անցավ առանց պատահարների և հատուկ իրադարձությունների: Համակարգում շարունակվեցին ամենօրյա վթարավերացման աշխատանքներն ու ոչ մեծ մասշտաբով ջրաշինարարական աշխատանքները: Հանրային կապերի ծառայությունը ձեռքը պահել է համակարգի զարկերակին և ֆեյսբուքյան ու կայքէջի միջոցով լուսաբանել բոլոր կարևոր և աչքի ընկնող աշխատանքները:

Փետրվարի սկզբին շարունակվեցին ցուրտ եղանակները, որով էլ պայմանավորված խնդիրները համա-



կարգում բազմաթիվ էին: Հանրային կապերի ծառայությունը լուսաբանել է «Ապարան» ջրաղբյուրի 14 խորքային հորերի տարածքում Վեոլիաթիմի իրականացրած ճանապարհի մաքրման և համակարգի սպասարկման 24-ժամյա աշխատանքները: Առավել դժվարին էր ցրտաշունչ Շիրակի մարզի Սարագյուղ համայնքում՝ -37 աստիճան ցրտի պայմաններում խորքային հորերից դուրս եկող ջրագծի 3 օր տևած հալեցման աշխատանքները, որից հետո վերականգնվեց համայնքի կանոնավոր ջրամատակարարումը: Հրապարակումների արդյունավետության բարձրացման համար այս թեմաներով գրառումները ուղեկցվել են ձյունոտ տեղանքի, տեխնիկայի կամ մասնագետների աշխատանքի մասին պատմող լուսանկարներով և տեսանյութերով:

Փետրվարին ավարտվեցին դեռևս հունվար ամսին սկսված Աշտարակ քաղաքի Գիտավան թաղամասը սնող 1100 գծամետր նոր մուտքագծի կառուցման աշխատանքները: ՀԿԾ-ն մեկ ամիս տևած աշխատանքներին անդրադարձել է մի քանի անգամ ցույց տալով, որ նման աշխատանքների արդյունքում ոչ միայն ջրամատակարարման համակարգն է արդիականացվում, այլև հնարավոր է լինում խնայել ջուր և ուղղել տարածաշրջանի այլ խնդրահարույց տարածքներին: Ինչպես, օրինակ այս դեպքում, երբ նախկին վայրկյանում 10 լիտրի ջրի փոխարեն այժմ թաղամասին տրվում է 1,5 լիտր՝ ապահովելով կանոնավոր ջրամատակարարում:




Հանրային կապերի ծառայության կողմից լուսաբանվեց Շիրակի մարզի Զիթհանքով, Լանջիկ, Քարաբերդ մեծածախ բաժանորդ հանդիսացող գյուղերի ջրամատակարարման խնդրի լուծումը: Նախկինում գյուղերը ջուր էին ստանում «Զլկաններ» ջրաղբյուրից, որի ջրաքանակը, սակայն, ձմռանը չէր բավարարում բնակավայրերում կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար: Վեոլիաթիմը գործարկելով գոյություն ունեցող, սակայն չչահագործվող «Սարալիկ» պոմպակայանը կարողացավ գյուղերին մղել վայրկյանում 13 լիտր ջուր:

Շատ կարևոր աշխատանք էր Կապան քաղաքում սկսված

ծրագիրը, որի շրջանակներում քաղաքի 8 թաղամասում տեղադրվեց 19 ճնշման կարգավորիչ փական բաշխիչ ցանցը կառավարելու, փողոցների և թաղամասերի ջրի ճնշումները կարգավորելու նպատակով: 150 մմ-ոց ՃԿՓ-ի տեղադրմամբ լուծվեց նաև Շիրակի մարզի Նոր կյանք, Վարդաքար և Հովտաշեն համայնքների ջրի ճնշման տատանումները:

Փետրվարի ամսին բազմաթիվ էին Գոտիավորման բաժնի մասնագետների կողմից հանրապետության տարբեր վայրերում իրենց տեխնիկական հատուկ սարքերի միջոցով գաղտնի վթարների հայտնաբերման դեպքերը: Եվ այսպես, միայն Արաբկիր վարչական շրջանում 4 գաղտնի վթարի վերացման շնորհիվ հնարավոր է եղել տնտեսել վայրկյանում 10,5 լիտր ջուր: 27 լ/վ տնտեսվեց Երևանի Տիգրան Մեծի, Մամիկոնյանց փողոցներում, Դավթաշեն 3-րդ թաղամասում հայտնաբերված և վերացված գաղտնի վթարների արդյունքում: Եվս վայրկյանում 7-ական լիտր ջուր խնայվեց Ծաղկաձոր քաղաքում և Պռոշյան գյուղում: Գաղտնի վթարներ վերացվեցին Գավառում, Սիսիանում, Մեղրիում և հանրապետության այլ բնակավայրերում: Այս թեմայով նյութերը լուսաբանելիս Հանրային կապերի ծառայությունը շեշտը դնում է այն բանի վրա, որ ՎեոլիաԹիմի համար թեկուզ մեկ լիտր ջուր համակարգ վերադարձնելը ամենարժեքավորն է:



VEOLIA

Պլանային ջրանջատում

?

Վթարային ջրանջատում

#ՎեոլիաԹիմ

Ճիշտ է, հաշվետու ամսում համակարգում արտակարգ պատահարներ չեն գրանցվել, սակայն խոշոր վթարների պակաս շահագործման տեղամասերը չեն ունեցել: Իջևանի սարերում՝ սողանքի գոտում վթարվել էր «Անապատի» 219 մմ-ոց ջրագիծը: Քարաթափման հետևանքով 6 տեղից ջրագիծը ճաքել էր: Նախ ՎեոլիաԹիմը այլընտրանքային ճանապարհով ապահովեց քաղաքի ջրամատակարարումը և հետո ուղևորվեց սողանքի գոտի վերացնելու վթարը: Խոշորներից էր նաև «Ալավերդի-Նոյեմբերյան» 500 մմ-ոց ջրատարը վայրկյանում 40 լիտր ջրի կորստով, «Լեռնապատի» 300 մմ-ոց ջրատարի վթարը, ինչպես նաև Եղեգնաձոր քաղաքի մի հատվածն ու Գետափ գյուղը սնող «Ոստան» 300 մմ-ոց ջրատարի վթարը, որը վերջին մեկ ամսում վթարվել էր 6-րդ



անգամ: Բոլոր դեպքերում էլ Հանրային կապերի ծառայությունը կապը պահելով շահագործման տեղամասերի հետ, լուսաբանել է ամբողջ գործընթացը՝ ներկայացնելով տեղում ընթացող աշխատանքներից լուսանկարներ և տեսանյութեր:

Հաշվետու ամսում կոյուղագծերի վթարների և խցանումների վերացման աշխատանքների մասին լուսաբանումները հիմնականում եղել են Չարենցավան քաղաքից: Մեկ ամսվա ընթացքում 3 անգամ Հանրային կապերի ծառայությունը անդրադարձել է քաղաքի տարբեր հասցեներում կոյուղագծերի խցանման և վթարման դեպքերին: Բոլոր դեպքերում էլ ՎեոլիաԹիմը արձագանքել է օպերատիվորեն և խնդիրները լուծել թե կոյուղիներն ու դիտահորերը մաքրելով, թե անհրաժեշտությունից էլնելով նաև վթարված հատվածները փոխարինելով: Իսկ արդեն «Չարենցավան-Երևան» 800 մմ-ոց կոյուղու կոլեկտորի խցանի վերացման աշխատանքները լուսաբանելիս Հանրային կապերի ծառայությունը կրկին հորդորեց սպառողներին կոյուղին օգտագործել բացառապես ըստ նշանակության:

Ամսվա պաշտոնական լուրը «Վեոլիա ջուր» ընկերության գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանի այցն էր Գեղարքունիքի մարզ, որտեղ ընկերությունը տեղադրել է արևային վահանակներ՝ Գավառի պոմպակայանը վերականգնվող և մասշեղի էներգիայով ապահովելու համար:


Հաշվետու ամսում որպես կրթական բաղադրիչի մաս՝ հրապարակվել է ջրանջատումների մասին տեղեկատվություն, որտեղ սպառողին ներկայացրել ենք վթարային և պլանային ջրանջատումների տարբերությունը՝ փորձելով ճշգրիտ ինֆորմացիայով կանխել հնարավոր թյուրըմբռնումները, ասեկոսները կամ մանիպուլյացիաներն առ այն, որ ջրանջատումները չեն կրում լուրջ բնույթ կամ ՎեոլիաԹիմը բավարար ջանքեր չի գործադրում վթարների արագ վերացման համար: Ինչպես նաև հրապարակումներ են եղել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, թափուր աշխատատեղերի, վթարային ու պլանային ջրանջատումների մասին:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ


5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

■ Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Բաժինը Ընկերության Հարավ Շահագործման տնօրինության թվով 167 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:


- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Վտանգավոր էներգիայի վերահսկում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- «ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների դերը և նշանակություն»
- «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ» թեմաներով դասընթաց:



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին ժամային համեմատական գրաֆիկ




5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

■ Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 14 քլորակայանում, 8 պոմպակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

■ ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 54 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և ելնելով համակարգերում տեխնադիկ վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձագիտական ընկերության կողմից իրականացվեցին թվով 2 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրի փորձաքննության աշխատանքներ, որից հետո վերոգրյալ օրենքի պահանջների համապատասխան պետք է իրականացվեն քլորակայանների տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

5.4 ՎԵՈՒԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՈՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՊՏԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

■ Հաշվետու ամսում ևս իրականացվել են Վեոլիա Գրուպի նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ, ինչպես նաև ինքնագնահատման և Ընկերության համակարգում ներդրման աշխատանքներ:

5.5. ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՄՊ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՆԸ

■ Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում մշակել է աշխատողներին տրամադրվող անհատական պաշտպանության միջոցների (ԱՊՄ-ների՝ Ամառային արտահագուստ, Պաշտպանիչ երկարաճիտ ռետինե կոշիկ, Ջրապաշտպան ռետինե արտահագուստ/OZK) տեխնիկական մասնագրերը, որոնց հիման վրա Ընկերությունը իրականացնում է վերոգրյալ ԱՊՄ-ների ձեռքբերման աշխատանքները:

■ ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների ձեռքբերման գործընթացը շարունակական է և այդ առնչությամբ պարբերաբար իրականացվում են կարիքների գնահատում և անհրաժեշտ քանակների ձեռքբերում:

5.6. ՀՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

■ Համաձայն Երևանի քաղաքապետի 22.12.2023 թվականի՝ «Երևան քաղաքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2024 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2024թ-ի փետրվարի 26-ին և 29-ին, Ընկերության ԿՄԿ և ՋՍ վարչության աշխատակիցները՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեցին 2024 թվականի մարտի 1-ին նախատեսված «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով հատուկ ցուցադրական տակտիկական ուսուսնավարժության նախապատրաստական աշխատանքներին:

«ՎԵՈՒԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am